ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 օգոստոսի 2024 թվականի N 1383-Ն

«ԵՐԵՐՈՒՅՔ», «ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ», «ԲԵՐԴԿՈՒՆՔ ԱՄՐՈՑ» ԵՎ «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԽԱՉՔԱՐԵՐ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, «ԵՐԵՐՈՒՅՔ», «ՀԻՆ ԽՆՁՈՐԵՍԿ», «ԲԵՐԴԿՈՒՆՔ ԱՄՐՈՑ» ԵՎ «ՆՈՐԱՏՈՒՍԻ ԽԱՉՔԱՐԵՐ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N 312-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ և 688-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի ու 17-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիպեմզա բնակավայրում գտնվող «Երերույք» պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային (4.40345 հա, ծածկագրեր 08-013-0009-0006 և 08-013-0009-0011 և 08-013-0009-0012), Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզի Գորիս համայնքում գտնվող «Հին Խնձորեսկ» պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային (122,7979 հա վկայական N 25062020-09-0004), Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդ-կունք բնակավայրում գտնվող «Բերդկունք ամրոց» պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային (0.97037 հա վկայական N 08122023-05-0167) և Նորատուս բնակավայրում գտնվող «Նորատուսի խաչքարեր» պետական սեփա-կանություն հանդիսացող պատմամշակութային (1.6319 հա վկայական N 22052023-05-0072) արգելոցներ:

2. Սահմանել՝

1) «Երերույք» պատմամշակութային արգելոցի տարածքը՝ 4.40345 հեկտար.

2) «Հին Խնձորեսկ» պատմամշակութային արգելոցի տարածքը՝ 122,7979 հեկտար.

3) «Բերդկունք ամրոց» պատմամշակութային արգելոցի տարածքը՝ 0.97037 հեկտար.

4) «Նորատուսի խաչքարեր» պատմամշակութային արգելոցի տարածքը՝ 1.6319 հեկտար:

3. Սահմանել, որ «Երերույք», «Հին Խնձորեսկ», «Բերդկունք ամրոց» և «Նորատուսի խաչքարեր» պատմամշակութային արգելոցների պահպանման և շահագործման ծախսերն իրականացվելու են «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

4. Ստեղծել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակեր-պության «Երերույք», «Հին Խնձորեսկ», «Բերդկունք ամրոց» և «Նորատուսի խաչքարեր» պատմամշակութային արգելոց մասնաճյուղեր:

5. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգամսյա ժամ-կետում՝

1) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ համատեղ՝ սահմանված կարգով կնքել համապատասխանաբար 4.40345 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շինության (ծածկագրեր 08-013-0009-0006, 08-013-0009-0011 և 08-013-0009-0012), 122.7979 հա մակերեսով հողամասի և ընդհանուր 256.14 քառ. մ մակերեսով շինության (վկայական N 25062020-09-0004), 1.6319 հա մակերեսով հողամասի և ընդհանուր 13.3 քառ. մ մակերեսով շինության (վկայական N 22052023-05-0072), 0.97037 հա մակերեսով հողամասի (վկայական N 08122023-05-0167)՝ անշարժ գույքի անհատույց անժամկետ օգտագործման պայմանագրեր՝ դրանցում սահմանելով, որ սույն կետից բխող գույքային իրավունքների պետական գրանցման և պայմանագրի կնքման հետ կապված ծախսերն իրականացվելու են «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցների հաշվին:

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի կողմից «Երերույք», «Հին Խնձորեսկ», «Բերդկունք ամրոց» և «Նորատուսի խաչքարեր» պատմամշակութային արգելոց մասնաճյուղերի կանոնադրությունների հաստատումը:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մարտի 6-ի N 202 որոշման մեջ փոփոխություն կատարելու և պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 312-Ն որոշման N 1 հավելվածը լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 31-րդ, 32-րդ, 33-րդ և 34-րդ կետերով՝

«31. «Երերույք» պատմամշակութային արգելոց

32. «Հին Խնձորեսկ» պատմամշակութային արգելոց

33. «Բերդկունք ամրոց» պատմամշակութային արգելոց

34. «Նորատուսի խաչքարեր» պատմամշակութային արգելոց»:

8. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում՝

1) ապահովել Գավառ համայնքի Բերդկունք բնակավայրի տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող, 05-020-0008-0012 կադաստրային ծածկագրով 0.97037 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողատեսքի փոփոխությունը հատուկ պահպանվող տարածքների «պատմական և մշակութային» գործառնական նշանակությամբ հողի:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ